

## ԳԼՈՒԽ 2 ԳԻՒՂԱՑԻՆ

Բայց մենք թողինք մեր ուղեւորները ճամփան, որոնք ամենքը պակաս բեռնաւոր եւլ քան Վահրիճ՝ առաջ անցան հետեւելով Գուրգէնի օրինակին. սա միայն մնաց վերջապահ կարաւանին, եւ վերջապէս վախելով իւր ձին ալ մնա բոլորովին՝ ձիուն սանձը ձեռքն սկսաւ կամաց-կամաց հետի քալել եւ այսպէս մուտք կոխեց, երբ անցաւ Թութայ գետը եւ միշտ ծովը ձախ թելին ունենալով հասաւ Էարզիթ: Քիչ մը մրսած, քիչ մը յոգնած, քիչ մը անօթի, քիչ մ'ալ ծարաւ, վասնզի իւր Ս. Կարապետի գինուոյ տիկը բոլորովին ցամքեր էր, «Եթէ իշխանը հոս չէ, — կ'ըսեր, — աւելի լաւ, նա իւր հանգստութիւնն արդէն գտած է: Արծրունի իշխանի մը ո՛վ չուզեր ծառայել, ո՛վ կրնայ չի ծառայել մանաւանդ այսպիսի իշխանի, որ մեղրի պէս քաղցր է, երբ լաւ վարուիս, աստուծոյ կրակն է, երբ գէշ վարուիս: Յոգնած, դադրած՝ աս գիշեր Արծրունի եմ, իմ հանգստութիւնս կը գտնեմ աս գիւղը, փա՛ռք աստուծոյ, բարեկամ, ինձամի չի պակսիր, երթանք մեզի տեղ ճարենք թէ որ իշխանը այստեղ չէ դադրեր»:

Ուստի, երբ գիւղին մէջ հասաւ, եւ շուները շրջապատեցին զինքը՝ հաչելով եւ վրան ցատկելով, նա վայրկեան մը կեցաւ մտածելով թէ ո՛ր լաւ ընդունելութիւն եւ վայելք կրնար գտնել, եւ այսպէս հաշուելով ու կշռելով որոշեց, որ Գեւորգ կնքահօր հիւր լինի, ուստի շտկուեցաւ նորա տունը:

Բայց երբ դռան առաջ հասաւ եւ դուռը զարնելու եղաւ՝ դուռն ինքնիրեն հազիւ թէ դպաւ՝ բացուեցաւ, ներս մտաւ, տեսաւ, որ մարդ չկար, զարմացաւ մնաց. «Գեորգ կնքահայր գնացել է, լաւ՝ մեռեր է, լաւ՝ միթէ՞ տղաքն էլ, կինն էլ, ամէնն էլ մեռան»: Ուստի որոշեց աւելի անդին, հին բարեկամ Կարապետին երթալ. այս անգամ դուռը պէտք եղաւ ծծօել եւ երկայն ծծօել, որ վերջապէս մարդ մը եկաւ բացաւ, մոմալով եւ զանգտելով քթին տակէն, բայց երբ հիւրը՝